Հավելված
Գյումրի համայնքի «Անի պարտեզ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի
տնօրենի 2025 թվականի դեկտեմբերի 09-ի N111-Լ հրամանի

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Անի պարտեզ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին**

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Անի պարտեզ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մեթոդիստի (1.0դրույք)** | **1 ) Որակավորման պահանջները՝**<br>Հաստատության մեթոդիստի, տնօրենի ուսումնականգծով տեղակալի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա ՝ բարձրագույ մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտի աշխատանքի առնվազն երեք տավա մանկավարժական գործունեության ստաժ:<br>**2) Ընդհանրական պահանջները.**<br>Մեթոդիստի ՝ տնօրենի ուսումնական գծով տեղակալի պաշտոնը զբաղեցնողը պետք է<br>1) տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին<br>2) Իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները , որոնք վերաբերում են կրթության բնգավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝.<br>ա. ՀՀ Սիմանադրությունը, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին» «Նախադպրոցական կրթության մասին» , « Լեզվի մասին», « Երեխայի իրավունքների մասին», « Պետական ոչ առևտրային կազմակերպոյուների մահին», «Լիցենզավորման մասին», Տեսչական մարմինների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» « Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝<br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br>2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br>4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | 1)դիմում (Ձև 1).<br>2)անձը հաստատող փաստաթուղթ.<br>3)կրթության մասին փաստաթուղթ.<br>4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br>5)ինքնակենսագրություն.<br>6)մեկ լուսանկար՝3x4 չափի.<br>7)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br>8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.<br>9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում): |

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td>«Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիզորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը:<br>բ. Մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիաի , հիգիենայի հիմունքները, ուսումնամեթոդական փաստաթղթերի վարման սկզբունքներին:.<br>Նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի , տնօրենի ուսումնական գծով տեղակալի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների 3-րդ սյունակօի 1-ին կետով նախատեսված պահանջներ հավասարապես բավարարելու դպքում մրցույթին հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև 2-րդ կետով նշված լրացուցիչ պայմանները:</td>
<td></td>
<td>Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:</td>
</tr>
<tr>
<td colspan="2">Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը</td>
<td colspan="2">Դիմումների և փաստաթղթերի ընդունումը</td>
<td>Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները</td>
</tr>
<tr>
<td colspan="2">Վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1, Գյումրու համայնքապետարան 3–րդ հարկ, նիստերի դահլիճ օրը՝ 2026 թվականի հունվարի 15-ին , ժամը՝ 14:30</td>
<td colspan="2">Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրի համայնքի «Անի պարտեզ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (հեռ. 077414578): Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «22» հոկտեմբերի 2024 թվական N1981 - Ա/2 հրաման):<br>Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:</td>
<td>2026 թվականի հունվարի 09-ը ներառյալ:</td>
</tr>
</table>